ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 12 մարտի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Հ. Նազարյանի

Քննության առնելով Արմինե Աթոյանի, Հայկ Նազինյանի և Արկադի Վարդանյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Արմինե Աթոյանը, Հայկ Նազինյանը և Արկադի Վարդանյանը 2018թ. փետրվարի 23-ին դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 2-րդ մասը»:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ.

2. Դիմողները գտնում են, որ վիճարկվող դրույթը հակասում է Սահմանադրության 60-րդ հոդվածով ամրագրված իրավունքին այնքանով, որքանով զրկում է անձանց իրենց սեփականությունն իրենց կամքով տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքից:

Ըստ դիմողների՝ վիճարկվող իրավակարգավորման համաձայն վարկային պայմանագրով կարող են սահմանվել պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման համար այնպիսի տույժեր, որոնք խախտում են պայմանագրի մյուս կողմի իրավունքները և օրինական շահերը՝ անբարենպաստ հետևանքներ առաջացնելով նրա համար:

Դիմողների կարծիքով՝ վիճելի իրավակարգավորման առկայությամբ պայմանավորված՝ պայմանագրի մի կողմը կարող է մյուս կողմի համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում գործարք կնքել՝ սահմանելով ծայրահեղ պայմաններ:

3. Դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա չեն դիմումի քննությունը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Արմինե Աթոյանի, Հայկ Նազինյանի և Արկադի Վարդանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

12 մարտի 2018 թվականի
ՍԴԴԿՈ/2-7